

Աժանս Ռիւս լրագիրը կըսէ թէ Ռուսական կողմէն իրաւագործական գործադրութիւնները մինչեւ ծայրայեղութեան հասնուց և տակաւին այսօր ալ նոյն գիտաւարտութեան վրայ է. բայց և այնպէս՝ եթէ պատերազմ ծագի, պատասխանատուութիւնը միմիայն Անգլիոյ վրայ կիցնայ:

Հոտմ 24 մարտ.
Միտհաթ փաշան Հոտմ եկաւ և այսօր երեսփոխանաց Ժողովին ներկայ գլուխուցաւ:

Կը հաւատեն թէ Նիս պիտի երթայ: Լոնտրա 26 մարտ.

Օտմ. Բոնա.	12 5/16
Փոլս.	1865 13 1/4
"	1869 13
"	1871 29 1/2
"	1872 29
"	1873 12 1/2
"	1874 30 1/4
Անգլ. Բոնա.	96 1/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օտմանեան Երեսփոխանական Ժողովը շարաթ օրը դռնփակ նիստ ըրաւ. երէկուան նիստն հրապարտականին էր, ինչպէս նաև այսօրուանն ու վաղուանը պիտի ըլլայ:

Շարաթ աւուր նստին մէջ Ժողովին ներքին կանոնադրութեան մինչեւ 88 յօդուածը կարգադրուեցաւ, և քանի մ'երեսփոխանք, ընդ որս և Սեպուհ Էֆենտի յիշատակեալն և Սահուհ Էֆենտի յիշատակեալն՝ իրենց գիտողութիւնն յայտնելու և ատենախօսելու համար անունին արձանագրել տուին:

Կըսուի թէ Գարատաղի պատգամաւորները մայրաքաղաքէս մեկնելու վրայ են:

Շարաթ օրն Օտմանեան Մէսուտիքէ զահաւորը ներսի նաւահանգիստէն դուրս ելած ժամանակ երկաթեայ նորաշէն կառուարին զարնըւելով, անոր արդէն քնանալ մասը բարձրովն խորտակեց:

Երբեմն առևտրական գործոց նախարար և վերջին ժամանակներս ալ Բեքուպուրի Օտմանեան դեսպան Գապուրի փաշան ուրաթ գիշեր վախճանեցաւ լերդի հիւանդութենէ և շարաթ օրը յուղարկուեալ թաղի մէջ կտաւ:

Շարաթ օրը երեսփոխան Բեաթիք մը Գարաթեղի կամուրջէն անցած ժամանակ ինքզինք ծովը նետեց. բայց մօտը գտնուող պահապաններն ու նաւակալարներն հասնելով աղատեցին և թաղապետութեան հիւանդանոցը տարին, ուր քննուելով հասկցուեցաւ որ խելքին եկած էր:

Վանէն գրուած նամակէ մը հետեւեալ գոհացուցիչ տեղեկութիւններն ստանալով կը փութամք մեր ընթերցողաց հաղորդել:

Աղաբէկեան Մարկոս Էֆենտի, որ վանայ կուսակալին խորհրդակցանէ, իւր պաշտօնատեղին հասնելուն պէս, իսկոյն փութացեր է հարկ եղած անմիջական բարեօրծանց ձեռնարկելու: Գաղաթին բոլոր Տաճիկ ոստիկանաց վրայէն զէնքերն տանուելով, իրենց տեղը ձանդուղիներն իր պարզ քաղաքացի, և ոստիկանութեան ինչպէս նաև հասարակաց ապահովութեան և բարեկարգութեան պահպանութիւնն ու հսկողութիւնը Հայոց յանձնուեր է, ասոնցմէ նոր ոստիկանութիւն մը կազմուելով, և զէնք (սուր և լիւթով) տրուելով այս նորակազմ Հայ ոստիկանաց: Գիշերուան պահապաններն ալ՝ որք Տաճիկ են եղեր՝ անոնց տեղ նոյնպէս զինուորեալ Հայեր դուրս եւ: Հրաման եղեր է որ ժամը 12 էն ետքը խանութները գոցուելով, բնաւ ունէ մէկը դուրս չլսիտի գտնուի, և այս արդեւորքին հակառակ գտնուողը պիտի

տի ձերբակալուի: Հայ Եփեսոսեանց և Գիշերապահներուն ալ կառավարութեան կողմէն բացօթյա արտօնութիւն տրուել է որ ձերբակալութեան ընդգիծողող ունէ մէկը-մինչև իսկ Տաճիկ մ'ալ եղած ըլլայ-անձնատուր ըլլալու հարկ եղած ոստիկան հրաւերին տնհանազանդ գտնուած ատենը՝ անմիջապէս դարձնել զայն:

Հայ ոստիկանութիւնն ամենայն աշարջութեամբ ու փութաշանութեամբ իր հսկողութեան պարտքը կատարել սկսեր է գիշեր և ցերեկ անընդհատ, և առջի բերան զիրենք բանի տեղ չընող տաճիկներէն զամանկ կրցեր և յաջողեր են եղած պատուէրին համեմատ՝ հաղաւթութեան բերելու: Ասոր վրայ տեղւոյն մէկ քանի երեւելի Տաճիկներն ուղղակի կուսակալին գիտնով գտնուողներն թէ Հայերն իրենց վրայ իշխելու ելած են, և թէ բռնութեամբ թող չեն տար կոր իրենց գիշերներն ուղած տեղերն իր արտօնութեան երթալու: Կուսակալն ալ կը պատասխանէ թէ Հայերն ասով կառավարութեան հրամանն ու պատուէրը ի գործ դրելու վրայ են, և թէ իրենք ալ իրենց տէրութեան այդ հրամանն ու պատուէրը յարգելու պարտականութենէն զատ ուրիշ բան չունին ընելու, և թող հանգիստ ու անդորր ըլլան թէ իրենց աղատութիւնն ինչքէն ու կեանքը առաջնանէն աւելի ապահովութեան տակ կը գտնուի այժմ:

Տաճիկներն այս պատասխանին վերայ՝ լուեկայն տեղերին գարձեր են, համադրուելով որ այլ ևս Հայերն են զկառավարութիւնը ներկայացնողն վանայ մէջ, ուր կատարել բարեկարգութիւն մը կը տիրէ, և ամեն մարդ նորոգ կարգեալ քննիչներուն գաւտեանը կ'ապուսէ, որ զան հրկիզութեան դէպքին վրայ ալ անաչառ քննութիւն մը բանալով յանցաւորներն խտուր պատժելու:

ԼԵՐԷՐ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
Ե Ս Ն Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է			
14 մարտ, երկուշաբթի իրիկուն	13,	7	
15 մարտ, երեքշաբթի առաւօտ			
բացուեցաւ	13,15		
ժամ 6 1/2ին	13,14		
Բուսիլի երկաթուղեաց ֆր.	35		
Թղթագրամ լիբ.	160 1/2		
ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ			
Կ. Պոլս 14 Մարտ			
Ստիկիթ Եֆենտի բաժ. Անգլ. լիբ.	3,	5	
• փոխանակութեան	2,	5	
Կ. Պոլսի Պանքային	3,	10	
Քրէտի Եֆենտի	3,		
Քրէտի Օթթոմ-Թիւրք	—		
Փոլս.	1863	69	
• 1865	70		
• 1869	65 1/2		
• 1872	24 1/4		
• 1873	61		
Թրամուայ Օտմ. լիբ.	1 35		
ԸՆԹԱՅՔ ԴԻՍԿՈՅ			
14 Մարտ			
Անգլ. լիբ.	109 35		
Նարոյէն ոսկի	87 25		
Խմէսիսի Ռուս	89 15		
Գրքերի	54 18		
Հինգ ֆրանք	—		
Հինգ անգլ.	113 20		
Պղինձ	169		

ԱՂԳԱՅԻՆ

Ղալաթիոյ ազգանուէր խմբակին դպչելու փորձերն անպատիւ չեն կըրնար մնալ:

Պ. Անտոն Թ. Ռշտունի անուն երեսփոխարէն, որ Ղալաթիոյ բնակիչ ըլլալով անցեալ հինգշաբթի աւուր Մատիսի միջոցաւ հարցում մ'ուղղած էր փափաղեան Ստեփան Էֆենտիին, կիրակի օրը Ղալաթիոյ եկեղեցւոյն մէջ շարաշար հարուածեցաւ Մշեցի ջրանկիւղէ մը և ձուտէն վիրաւորեցաւ: Այս խմբ. Ժակն յանդուգն դուրս

ծին վրայ հետեւեալ մանրամասն տեղեկութիւնը կը տեսնենք երէկուան Լրագրոյ մէջ:

... Խմբագիր.

Ղալաթիոյ թաղը նորէն խռովութեանց ասպարէզ մը դարձնել կը փորձուի: Երէկ, եկեղեցւոյ աւարտականէն ետքը, Ա. Ռշտունի անուն երեսփոխարէն Թաղ. խորհրդարանին դռնէն ներս մտնելու պահուն՝ եկեղեցիէն դուրս ելնող Ժողովրդոց մէջն Մշեցի մը յանկարծ Ռշտունիի գլխուն ճգի հարուած մը տալով գրգռել կը պատուէ: Ժողովուրդը խռովութեան մը դռնէն Մշեցին ու խորհրդարանը կը խօթեն, ուր կը հասնին նաև քարոզիչ Ամբոստիս վարդապետն ու Ս. փափաղեան Էֆ. որն որ շապիկ հագնելով աւուր պատշաճի ճաշուի գիրքը կարդալէն ու ձայնաւորութենէն արիւն քրտինք մտեր էր: Մշեցիին հարցուելով թէ կը ճանչնէ՞ ղրիշտունին և թէ ինչո՞ւ համար դարկեր էր, կը պատասխանէ թէ՛ «չճանչնէր»: Բայց անցած օր բողոքող Մշեցիք վարչութեան դիմած ատենանին՝ այս մարդն ըսաւ թէ կըսէ, «ահա չափաւր Մշեցիներն եկան. ես ալ անոր համար դարկի»: »

Ժողովուրդը նայ միջոցին Զապ. թիւ մը բերել տալով Ս. փափաղեան Էֆ. մէջ կըմտնէ և ոստիկանը կը ճանաչէ: Մշեցիին ալ ապուսի մը զարնելով, —որն որ Նշանակութեան արժանի ծիծաղով մը կընդունի տալուով. — զայն կըմտնէ, իշխանութեան ձեռքէն փախցնելու համար. իսկ Ժողովրդէն ոմանք դուրսը բռնելով Մշեցիին՝ ոստիկանութեան յանձնեցին, ուր թուրնալ ըլլալով Ղալաթիոյ Սէրայը կը տարուի և հան կորուզուի 15 օր բանտարկուելու հարցաքննութեան ենթարկուելու պայմանաւ, որպէս զի յայտնուի թէ ո՞վ է զինքը թաղաւորը:

Այս դէպքին վրայ խնդիրն ու յուզումը շարունակուելով եկեղեցւոյ թաղ. խորհրդարանին մէջ, նորքնալի թաղականաց և Ժողովրդի ներկայութեան Ս. փափաղեան Էֆ. պաշտօնով կըսէ թէ,

« Նորքնալի թաղ. խորհրդոյ անդամաց երկուքէն զատ, որք թողեցին են, միւսներէն ո՞վ որ դայ, ձեռնելով փետուրով դուրս պիտի վրաւանէք ասկից, այո՛, և ես ալ կը շարունակեմ Ս. փափաղեան Էֆենտիին, սա նոր շինուած վարժարանին մարմարեայ սանդուխներէն վար մինչեւ որ «էլ» պէս կարմիր արիւն վար վաղելը չտեսնուի՝ այս խնդրոյն մէջն դուրս չլսիտի ելլեմ: »

... Խմբագիր, ողջամիտ ընթերցողացդ գաղաղութեանը կը յանձնենք մեր տեսնելու թէ ո՞վ եղած է Ղալաթիոյ խռովութեանց շարժառիթն ու գրգռիչը, և թէ ո՞վ է պղծ մշեցիներուն թեւադրիչը, որ նորէն մեղեցոց բանակ մը հանել կ'ապաւնայ Ժողովրդին ու վարչութեան դէմ. բայց պէտք է գիտնայ թէ 1874ը անցած է հիմայ, և անանկ պօս ալ կանչելներու և լեղումագրութեան ու սպառնալեաց «փափու՛՛» ձգող չկայ:

14 մարտ 1877

... Խմբագիր Մատիս պատուական լրագրոյ.

Խնդրեմ ձեր թերթին մէջ մի անկիւն շնորհել յետագայ յօդուածին, որոյ հրատարակութիւնն անհրաժեշտ է՝ հասարակութեան մ'իրաւունքը բնաւարտող և ազգային գործերը խիտ շատ անգամ միայն ի հաճոյս իւր ի վնաս ազգին դուրսը անծի մը սուտ հրատարակութեան դէմ, որ կը խորհի միւս քրիկաները զրգարուել (Թէպէտ ըստ օրինի պէտք էր ուղղակի Միտի խմբագրութեանն ուղարկել և ի-

րենց ստոյ հեղուքն իրենց հրատարակել տալ. բայց նորա (ըստ իւրեանց զբոսի) միայն իրենց խօսելու իրաւունք ունենալ կարծելով, պատասխան ընդունելու արդարութիւնն ամենին չեն մըտարներ. հետեւաբար և իրենց ուղղեալ պատասխան մի՛ որչափ ալ արդար լինէ չեն հրատարակել, երբ իրենց հերքողն է, այլ կը բաւականանան ծածուկ կարգալով և մէկզմէկ մեղադրելով):

Արդէն իսկ կը մատուցանեմ իմ շնորհակալութիւնն, որ դուք այսպիսի դէպքերու մէջ միշտ ձեռնութիւնը կը յարգէք: Կ. Վ. Սթըպտ

Առ խմբագրութիւնն Միտի ամսագրեր թիւն Երեսփոխանի:

1876 նոյեմբեր 30 ամսագրում Միտի թերթին մէջ մի համարողութեան վերջնադրով յօդուած մի դրած էիք, որպէս թէ միաբանութեան քանի մի հայերէն և եղբայրներէն տրուած, յորում Մեղու Հայաստանի 39 համարին մէջ վաղարչապատէն դուրս յամակի մը բովանդակութիւնն առիթ բռնած՝ զմեզ Ս. Թաղապետաց միաբանութեանն առանց օրինաց և առանց իսկ քննութեան յանձնարարեալ (յորում ողջ միաբանութիւնն յաւանայս կը լռէր բռնութեան դէմ չհամարձակելով) արդարացնել կը ջանայիր. ինչպէս երբեմն ալ եղեւտեանին մեր վերայ շարապարած (յմաստիւ և ի Մարգարէն)՝ չարախօսութիւնքն առիթ բռնած՝ ուրախանալու ցոյցեր կընէր դարձեալ Միտի միջոցաւ, դարուս ազգային պատմական դէպքերն մինչև ի 1872 թ. ևսականն տակաւին ընթերցարարած չի ներկուց համար:

Ինչպէս ձեր յառաջագոյն յայտնած ուրախութիւններն, նոյնպէս և այժմեան արդարանալն ու մեր վերայ դրած մեղքերն՝ զոր առանց որ և է ստոյգ տեղեկութեան ըստ ձեր մտացն հաւատացած և այլոց հաւատացնել կը ջանայիր չարժէն բնաւ պատասխանել. վասն զի ձեր ոչ զրոյն յայտնի է և ոչ դատողն՝ որ պատասխանեմ ուղղակի նորա լսողութեանն համեմատ, ըստ որում ամենեւեմ ալ ծանօթ էք ինձ անձամբ անձին:

Սակայն այս անգամ կը պատասխանեմ ձեզ սակաւաւ (այն դիտողութիւնը թեւադրողին, վասն զի դուք ձեր աչքերն խփած՝ թերեւս յանդէտ տակաւին) և չտեսնելով ինչ ուրիշներն ևս չտեսնուի կարծելով, կարի փորը պարունակի մը մէջ ունեցած ձեր մասնաւոր իշխանութիւնն յանգափա խորացուցած (ի հարկէ ձեր մտաց մէջ միայն) ազգային ընդհանրական հոգեւոր իշխանութեան դէմ մեծամեծս կը բարբառիք. նա մասնաւորաւ Ազգ. վարչութեան դէմ աւելի անպատշաճ արտայայտութիւններ կը լուտայք, որպէս թէ նորա բնաւ բնորոգութիւն կամ ձեռք ձանաչողութիւն չունին, և միշտ ձեր իրաւանցը դէմ կը մեղադրեն և այն ի՞նչով. — ձեր մեղաւոր կարծածներն արդար գտնուելով:

Իսպառ կը սխալիք դուք, երբ կը կարծէք թէ ձեզմէն բարձր հոգեւոր իշխանութիւններն (որոց մին ձեր շնորհն և միւսն ձեր վարչութիւնը կը հաստատեն) առանց որ և է քննութեան ընդունած լինին զմեզ վասն զի նորա քննեցին և վերահասու ևս եղան. նա՛ ոչ միայն ընդունելու միջոցին, այլ և ամեն դէպքերու մէջ ևս կը քննեն. նմանապէս այս վերջին դէպքն (զոր իմ վերայ լսելու ուրախութիւնն ունեցաւ) այնպէս ներկայացնուի ու նորա պատճառ տուելու ևս քննութեան մէջ ձանձուցեցան. որոց անունները կը յիշէի ձեր ալ կանչին, և հանրաժանութիւններն համար հաստատութիւն մի ևս կը լինէին զրոյս համարութեանը, եթէ նոյն միտն մեզմէ չլինէր արդէն:

Հոգեւոր իշխանութեան կատարած քննութիւններն ոչ կը լռէք, և ոչ տեղեկաւ կանալ կուզէք. վասն զի ձեր ականջը միայն փողոցներուն բացած էք, և ոմանց փողոցի մարդկանց խօսածներն ախորժանք կը լսէք, և ձեր սին դատողութեամբ ուրախութիւնիդ յայտնելու միջոցին՝ առանց ձեր չափը ճանչնալու բարձրագոյն իշխանութիւններն կը մեղադրէք:

Ձեզ արդարացնել կը ձգնիք (երանի թէ արդարանայիք դոնէ ձեր խոշմտաւնացը մէջ) և միանգամայն կը դրէք թէ հոգեւոր իշխանութեանն բռնած այս ընթացքին երեսին տեղադր. միաբաններն բոլոր մեկնիլ թերեւս ցանկանան, և այս շարեաց բացարձակ պատճառ կը դնէք արդէն մեկնած միաբանաց ազգին մէջ գտած ընդունելութիւնն ու պատիւը, առանց բնաւ մտածելու, որ ամենայն անձն իւր հետ ունի իւր յատկութիւնը:

Թէպէտ պիտի չկարողանամ հաւատարմացնել ձեզ, սակայն անհատիկ դրով ևս

* Անժառանգ թէ վանքէն մեկնող միւս բանից մէջ պիտի օրհնուի, որք իրենց համոթեալներն և անտողիւտ վարուք պատիւ կը բերեն ազգին, ինչպէս են Ս. Երեսփոխան Նորաբող. Պատրիարքական

